ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

6 մայիսի 2015 թվականի N 47-Ա

ՀՈՎԻԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ <<ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. մայիսի 5-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. Հովիկ Դավթյանին 2015թ. մայիսի 7-ից նշանակել «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք.Հ.Դավթյանի անձնական դիմումը:

2. Հ.Դավթյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

2015թ.մայիսի 6
ք. Կապան